ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը մայիսի 2016թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/

Ն 1 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8/1 կետի, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի Էջմիածնի խճուղի N4/1 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0410-0126/, համայնքային սեփականություն հանդիսացող 0.4819հա բնակավայրերի նշանակության այլ հողատարածքի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի /գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների/ փոփոխելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ – 9 ***ԴԵՄ – 0*** ***ՁԵՌՆՊԱՀ - 0***

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	

Կ. Շահազիզյանը քվեարկությանը չի մասնակցել:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը մայիսի 2016թ.

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/

Ն 2 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի Արագածոտնի թեմի առաջնորդարանի 31.03.2016թ. N382 գրությունը՝ Աշտարակ քաղաքի Սիսակյան փողոցում գտնվող Հայորդաց տան տարածքը և նրան հարակից համայնքային սեփականություն հանդիսացող Նորայր Սիսակյանի հուշարձանի շրջակայքը, որպես մեկ ամբողջական պուրակ քաղաքի բնակչությանը ծառայեցնելու նպատակով իրենց կողմից կատարվող շուրջ 500մլն դրամ արժողությամբ շինարարական և բարեկարգման աշխատանքներին նաև համայնքի ֆինանսական աջակցությունը ստանալու վերաբերյալ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքի կենտրոնական հատվածում նման բարեկարգ տարածք ունենալը կնպաստի քաղաքի ազգաբնակչության, հատկապես երիտասարդության ազատ հանգստի կազմակերպմանը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համաձայնություն տալ համայնքի բյուջեի միջոցներից Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին 5 /հինգ/ մլն ՀՀ դրամ գումար տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ – 9 ***ԴԵՄ – 0*** ***ՁԵՌՆՊԱՀ - 0***

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	

Կ. Շահազիզյանը քվեարկությանը չի մասնակցել:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ **Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն**